ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2016 թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲԱԶՄԱՄՅԱ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի մի շարք համայնքներում բազմամյա խոտաբույսերի մշակության 2016 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը.

2) Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների պատասխանատու է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմը.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի վարչակազմը կիսամյակային հաշվետվություն է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն՝ սույն Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների մասին.

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ *Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2016 թվականի _____ ___-ի
N _____ -Ն որոշման

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲԱՁՄԱՄՅԱ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2016 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի մի շարք համայնքներում բազմամյա խոտաբույսերի մշակության 2016 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ընդգրկում է Քարին տակ, Եղցահող, Հին շեն և Մեծ շեն համայնքները, որոնց հեռավորությունը մայրաքաղաք Ստեփանակերտից տատանվում է 18-55 կիլոմետրի, իսկ շրջկենտրոն Շուշիից՝ 5-42 կիլոմետրի սահմաններում: Շրջանի նշված համայնքներն ունեն 5708,18 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողեր, որից վարելահող՝ 372,68 հեկտար (239,68 հեկտարը սեփականաշնորհված է Ասկերանի շրջանի տարածքից), բազմամյա տնկարկ՝ 10,25 հեկտար, խոտհարք՝ 360,24 հեկտար, արոտավայր՝ 4605,11 հեկտար, այլ հողեր՝ 359,9 հեկտար:

Շուշիի շրջանի համայնքների համաչափ զարգացումը մեծապես պայմանավորված է համայնքների գյուղատնտեսության զարգացմամբ, քանի որ ներկայումս և տեսանելի հեռանկարում այս ենթաշրջանի բնակչության մեծ մասի կենսամակարդակի բարձրացման աղբյուր են լինելու այն եկամուտները, որոնք ստացվում են գյուղատնտեսական արտադրությունից և գյուղատնտեսության բնագավառում վարձու աշխատանքից՝ հաշվի առնելով շրջանում առկա հողային, աշխատանքային, տեխնիկական ռեսուրսների առկայությունը:

Սույն Ծրագրով ներկայացվում է Շուշիի շրջանի մի շարք համայնքների գյուղատնտեսության զարգացման 2016 թվականին իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպատակը.

Վերջին տարիների բնակլիմայական անբարենպաստ պայմանները բացասաբար են անդրադարձել շրջանի բնական կերհանդակների՝ արոտավայրերի ու խոտհարքների բերքատվության վրա, ինչը կարող է հետագայում խնդիրներ առաջացնել գյուղատնտեսական կենդանիների կերակրման առումով՝ ազդելով կենդանիների մթերատվության վրա:

Հաշվի առնելով գյուղատնտեսության համախառն արտադրանքում անասնաբուծության ճյուղի տեսակարար կշռի ավելացման անհրաժեշտությունը, անասնագլխաքանակի աճի միտումները և դրանով պայմանավորված անասնակերի

բազայի կայունացման կարևորությունը, ինչպես նաև հողերի արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը առաջարկվում է շրջանում, բազմամյա խոտաբույսերի մշակության համար պիտանի, առկա տարածքները դնել կորնգանի մշակության տակ:

Սույն Ծրագրի հիմնական նպատակն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի համայնքներում կերային կայուն բազայի ստեղծումը՝ հաշվի առնելով անասնաբուծության զարգացման դրական առաջընթացը:

Խնդիրները.

1) շրջանի համայնքներում գյուղատնտեսության ճյուղերի համաչափ զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում.

2) կերարտադրության և անասնաբուծության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում.

3) առկա գյուղատնտեսական նշանակության հողերի լիարժեք օգտագործման և հողերի վիճակի բարելավման համար հնարավորությունների ստեղծում:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Շուշիի շրջանի մի շարք համայնքներում կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համայնքներում կերարտադրության և անասնաբուծության զարգացման համար, առաջնահերթ, անհրաժեշտ է իրականացնել կերային բազմամյա խոտաբույսերի մշակություն (կորնգան):

Բազմամյա կերային մշակաբույսերի տարածքների ընդլայնումը կարևորվում է ինչպես անասունների համար կերային բազայի ապահովման, այնպես էլ վարելահողերի կառուցվածքի բարելավման տեսանկյունից: Ծրագրով նախատեսվում է բազմամյա խոտաբույսերի 50 հեկտար տարածքի մշակության համար հատկացնել 3 662 300 ՀՀ դրամ: Նշված ֆինանսական միջոցները կամ անհրաժեշտ ապրանքանյութերը կտրամադրվեն բազմամյա խոտաբույսերի տակ նախատեսված տարածքների մշակության համար (հերկ, կրկնահերկ, կուլտիվացիա, ցանք, դիզվառելիքի ձեռք բերում) անհատույց՝ շրջանի վարչակազմի կողմից ներկայացված համապատասխան հայտի հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից 2016 թվականի պետական բյուջեով «Ենթաշրջանային ծրագրերի իրականացում» միջոցառմամբ նախատեսված միջոցներից, իսկ միջոցառման իրականացման համար համապատասխան քանակությամբ սերմը հողօգտագործողներին կտրամադրվի Լեռնային

Ղարաբաղի Հանրապետությունում կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագրի շրջանակներում:

Ծրագրի իրականացման համար 2016 թվականին պահանջվող ներդրումներն ըստ համայնքների և Ծրագրի իրագործման համար 2016 թվականին պահանջվող ներդրումներն ըստ եռամսյակների ներկայացված են NN 1 և 2 աղյուսակներում:

Աղյուսակ N 1

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

Հ/հ	Համայնքը	Նախատեսվում է ցանքս (հեկտար)	Տրամադրվող ֆինանսական միջոցները (ՀՀ դրամ)		
			Պահանջվող դիզվառելիքի գումարը	Գյուղատնտեսական տեխնիկայի վարձավճար (ներառյալ եկամտահարկ)	Ընդամենը համայնքում
1	Հին շեն	14	529 200	496 244	1 025 444
2	Մեծ շեն	12	453 600	425 352	878 952
3	Եղծահող	20	756 000	708 920	1 464 920
4	Քարին տակ	4	151 200	141 784	292 984
Ընդամենը		**50**	**1 890 000**	**1 772 300**	**3 662 300**

Աղյուսակ N 2

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ

(ՀՀ դրամ)

Հ/հ	Ներդրումների նպատակը	2016 թվական	այդ թվում՝ ըստ եռամսյակների			
			1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1.	Կերային բազմամյա խոտաբույսերի մշակություն	3 662 300		3 662 300		

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համապատասխան ներդրումներ կատարելու դեպքում սույն Ծրագրի իրականացումից ակնկալվում է Շուշիի շրջանի համայնքներում գյուղատնտեսության ոլորտում կերարտադրության և անասնաբուծության զարգացման առաջընթաց, որն առաջիկա տարիներին կդրսևորվի հետևյալ արդյունքներով.

1) դրական տեղաշարժեր կլինեն բուսաբուծության և անասնաբուծության ներճյուղային կառուցվածքում. կավելանան կերային մշակաբույսերի տարածքները, կաթի և մսի համախառն արտադրությունը.

2) կերային մշակաբույսերի մշակությունը դրական ազդեցություն կունենա գյուղատնտեսական հողատեսքերի բերրիության բարձրացման վրա: Այն, որպես ցանքաշրջանառության կարևոր օղակ, կնպաստի դաշտերի մոլախոտերից մաքրմանը, հողի կառուցվածքի բարելավմանը, ազոտով հարստացմանը, դրանից հետո մշակվող կուլտուրաների բերքատվության բարձրացմանը.

3) անասնագլխաքանակի ավելացման արդյունքում կբարձրանա բնական կերահանդակների օգտագործման մակարդակը.

4) տեղական արտադրության հաշվին կբարձրանա անասնաբուծական մթերքներով ապահովվածության մակարդակը.

5) անասնաբուծական մթերքների արտադրության ծավալների ավելացումը կնպաստի վերամշակման ճյուղի զարգացմանը.

6) գյուղատնտեսության ոլորտի գործունեության արդյունքում կբարձրանա բնակչության զբաղվածության մակարդակը, կավելանան եկամուտները:

Իրականացվող ներդրումների հաշվին կկատարվի 50 հեկտար բազմամյա կերային խոտաբույսերի ցանքս՝ 2016 թվականի գարնանը և աշնանը, որից հետագայում կապահովվի տարեկան միջինը 250-270 տոննա համախառն բերք՝ տարվա կտրվածքով 1 տոննայի միջին արժեքը կազմում է 35 000 ՀՀ դրամ: Ստացված բերքը որպես անասնակեր օգտագործման դեպքում ակնկալվում է ստանալ միջին հաշվով 10 տոննա միս՝ կենդանի քաշով, որի ընդհանուր արժեքը գործող գներով կազմում է 10 000 000 ՀՀ դրամ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ *Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲԱԶՄԱՄՅԱ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Անհրաժեշտությունը

Շուշիի շրջանի մի շարք համայնքներում բազմամյա խոտաբույսերի մշակության ծրագրով ներկայացվում են տվյալ համայնքներում իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները: Շուշիի շրջանի մի շարք համայնքների բազմամյա խոտաբույսերի մշակության ծրագիրը նպատակաուղղված է տվյալ շրջանի մի շարք համայնքների հետագա զարգացման համար նախադրյալների ապահովմանը:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Շուշիի շրջանի համայնքների գյուղատնտեսության զարգացումը հիմնականում պայմանավորված է ագրոպարենային համակարգի զարգացմամբ և այդ ուղղությամբ պահանջվում է առանձին ոլորտների մասով տարեկան կտրվածքով ծրագրային մոտեցում:

Շուշիի շրջանի համայնքների ագրոպարենային համակարգի կայուն և հետևողական զարգացման նախադրյալների ապահովման նպատակով անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ հատկացնել գյուղատնտեսական ճյուղերի զարգացման և բարելավման ուղղությամբ:

Նպատակը և բնույթը

Ծրագրի նպատակը Շուշիի շրջանի մի շարք համայնքներում բազմամյա կերային մշակաբույսերի տարածքների ընդլայնմամբ անասունների համար կերային բազայի ապահովումն է և գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքի բարելավումը:

Ակնկալվող արդյունքը

Ծրագրի իրականացումից ակնկալվում է Շուշիի շրջանի մի շարք համայնքներում գյուղատնտեսական ոլորտում կերարտադրության և անասնաբուծության զարգացման առաջընթաց:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության և իրավաբանական բաժինների կողմից:

Այլ տեղեկություններ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի մի շարք համայնքներում բազմամյա խոտաբույսերի մշակության 2016 թվականի ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ա.ՄԽՈՅԱՆ*

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲԱԶՄԱՄՅԱ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի մի շարք համայնքներում բազմամյա խոտաբույսերի մշակության 2016 թվականի ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲԱԶՄԱՄՅԱ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի մի շարք համայնքներում բազմամյա խոտաբույսերի մշակության 2016 թվականի ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ *Ա.ՄԽՈՅԱՆ*

ԻՐԱՎԱԿԱՆ-ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲԱԶՄԱՄՅԱ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի մի շարք համայնքներում բազմամյա խոտաբույսերի մշակության 2016 թվականի ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝
«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի մի շարք համայնքներում բազմամյա խոտաբույսերի մշակության 2016 թվականի ծրագիրը հաստատելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝
ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն

ԼՂՀ կառավարության և ԼՂՀ վարչապետի որոշումներն ուղարկել՝

1. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԼՂՀ արդարադատության նախարարություն
3. ԼՂՀ ֆինանսների նախարարություն
4. ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ
5. ԼՂՀ շրջաններ

Նախագիծը պատրաստողը՝
ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժին

_____ ***Վ.***
Ավետիսյան (ստորագրությունը)

«_____» _____ 2016թ.